ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնք
Հայաստանի Հանրապետություն, Շիրակի մարզ, ք.Մարալիկ,

ՈՐՈՇՈՒՄ N 59

17 հունիսի 2022 թվական

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ՄԵԿ ԱՆՁԻՑ ԳՆՄԱՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԳՆՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ՄԱՍԻՆ

<<Շեն>> բարեգործական հասարակական կազմակերպության, Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Հայկաձոր և Իսահակյան բնակավայրերի երիտասարդական նախաձեռնող խմբերի կողմից Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքապետարան է ներկայացվել Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի <<Սառնաղբյուրի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության շենքի նորոգման, 44-օրյա պատերազմում զոհվածների հիշատակը հավերժացնող պուրակ այգիների կառուցման առաջարկություններ, որտեղ նշված նախաձեռնող խմբերը պատրաստակամություն են հայտնել այգիների կառուցման շինարարական աշխատանքներին իրենց մասնակցությունն ապահովել աշխատանքի և շինարարական նյութերի տեսքով: Շինարարական աշխատանքները Հայաստանի Հանրապետության օրենքների շրջանակներում իրականացնելու և Անիի համայնքապետարանի մասնակցությունը վերը նշված նախաձեռնությանն ապահովելու համար անհրաժեշտություն է առաջացել կազմակերպել հրատապ գնման գործընթաց և ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի, <<Գնումների մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման N 1 հավելվածով հաստատված գնումների գործընթացի կազմակերպման կարգի 23-րդ կետի 5-րդ ենթակետի <<բ>> և <<գ>> պարբերություններով.

Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի ավագանին

որոշում է

Տալ համաձայնություն Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի Հայկաձոր, Իսահակյան բնակավայրերում այգիների կառուցման և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Անի համայնքի <<Սառնաղբյուրի մանկապարտեզ>> համայնքային ոչ առևտրային կազմակերպության շենքի նորոգման աշխատանքները կազմակերպել մեկ անձից գնման ընթացակարգով, որի գինը կարող է գերազանցել գնումների բազային միավորը 1000,0 (մեկ միլիոն) Հայաստանի Հանրապետության դրամ:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ԱՆԴԱՄՆԵՐ՝

Կողմ՝ -13 Դեմ՝-0 Ձեռնպահ՝-0

Ն. ԱԼԱՎԵՐԴՅԱՆ

Ա. ԱՐՄԵՆՅԱՆ

Ս. ԳԵՎՈՐԳՅԱՆ

Կ. ՀՈՎՍԵՓՅԱՆ

Մ.ՂԱԶԱՐՅԱՆ

Գ.ՂԶՐՈՅԱՆ

Բ. ՄԵԼԻՔՅԱՆ

Ա.ՆԱԶԱՐՅԱՆ

Ա. ՆԻԿՈՅԱՆ

Ա. ՈՒՌՈՒՄՅԱՆ

Վ.ՍԱՀԱԿՅԱՆ

Զ. ՍԱՐԳՍՅԱՆ

Ա.ՎԱՐՈՍՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ

ԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ԳԵՎՈՐԳՅԱՆ

2022 թվականի հունիսի 17
Քաղաք Մարալիկ